Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1884 ԱՄՍԻՆ

ՆԻՍՏ Ը.

3 ՕԳՈՍՏՈՍ 1884

Կ. ՊՕԼԻՍ

1884

ԴԻՒԱՆՆԵՐ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Տիգրան	Էֆէնտի	Եուսուֆեան	Ա. Ադենոպէտ
Քրիստոսատուր	»	Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Դ. »
Յովհաննէս	»	Արշակունի	Ա. Ադենոպէտ
Յակոբ	»	Պօշնակեան	Բ. »

Զեռնարտութեան Դիւան

Մատթէոս Եսկ. Իզմիրլեան Ադենոպէտ
Գարեգին Վրդ. Թաթարեան
Մարկոս Էֆէնտի Աղաբէգեանց

Դաստիարակութեան Դիւան

Ռէթէոս Էֆ. Պէրպէրեան Ադենոպէտ
Գէորգ » Ապտուլլահ
Միքայէլ » Մամիկոնեան

Կալուածոց Դիւան

Քրիստոս. Էֆ. Ղազարոսեան Ադենոպէտ
Յակոբ » Եէմէնիճեան
Պօղոս » Թորգոմեան

Համարակալուրեան Դիւան

Կարապետ Էֆ. Սրբաճեան Ադենոպէտ
Մկրտիչ » Ճանբմեան
Գառնիկ » Յովակիմեան

Յարաբերութեան Դիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Ադենոպէտ
Ռուբէն » Պուլկուրեան
Վիչէն » Օրմանեան

Իրաւասութեան Դիւան

Յովհաննէս Քհյ. Մկրեան
Յակոբ Էֆէնտի Արշակ
Գաբրիէլ » Նորատունկեան

Նախաձեռնութեան Դիւան

Մինաս Էֆէնտի Չերազ Ադենոպէտ
Յովհաննէս » Արշակունի
Նշան » Պոյաճեան

Խմբագրութեան Դիւան

Հաբարձում Էֆէնտի Ալաճաճեան
Յակոբ » Գուրգէն
Կարապետ » Իսթիւճեան

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1884 ԱՄԻ

ԵՒՍՏ Ը.

3 ՕԳՈՍՏՈՍ 1884

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան.

ՕՐԱԿԱՐԳ

Ա. — Ատենական գործողութիւնք.

Բ. — Խնդիր Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման — Տեղեկագիր Ազգային Վարչութեան (գրանվ).

Գ. — Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ Ազգային կեդր. ելմտացոյցի.

Դ. — Առաջարկութիւն Ազգային Վարչութեան Խառն Ժողովոյ ի մասին Առաջնորդական խնդրոյ.

Ե. — Ընտրութիւն Գ-ու Ատենադպրի Ազգային Ժողովոյ.

Ատեանն բացուեցաւ ժամը 2 1/2 ին 'ի ներկայութեան 23 Երեսփոխանաց, որոց վերջին թիւը 38 ի յանգեցաւ։

ՕՐԱԿԱՐԳ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1.

Վաւերացումն Է. Նստի Ատենագրութեան

Նախընթաց նստի տպագիր ատենագրութիւնն նստին առաւօտը Երեսփոխանաց ձեռքն հասած լինելով, Կ'ՈՐՈՇՈՒԻ յաջորդ նստին թողուլ անոր վաւերացումը։

2.

Բացակայութիւնք

Երեսփոխաններէն՝

Կարապետ Էֆէնտի Սրվանեան
Սեներերիմ » Մանուկեան

անձնական տկարութեան պատճառաւ Ժողովոյ այսօրուան նիստէն բացակայ մնալնին գրով հաղորդած լինելով Դիւանին, իբր օրինաւոր բացակայք՝ Ատենապետ Էֆէնտի արձա-

նագրել կուտայ նոցա անուանքն 'ի տումարի ներկայութեան։

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Մանուկեան Սենեքերիմ էֆէնտի թէ և անցեալ նստին հաղորդած էր Դիւանին իւր բացակայութեան դիրն, բայց ինչպէս գիտէր, վերջին պահուն որոշուեցաւ այսօրուան թողուլ անոր ընթերցումը, որով նախորդ նստի համար եւս օրինաւոր բացակայ պէտք է նկատուի։

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, օրինաւոր է։

Ատենադպիր էֆէնտի կ'ընթեռնու նաև Ղազարոսեան Գրիգոր էֆէնտիի բացակայութեան հետեւեալ դիրն։

Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի
Ազգային Ընդհ. Ժողովոյ.

Սամաթիոյ Թաղ. Խորհրդոյ անդամներէն մին լինելով և Ս. Գէորգ Եկեղեցւոյ հիմնարկութեան օծման արարողութիւնը յառաջիկայ կիւրակէ տեղի ունենալուն պատճառաւ՝ այս մասին ըլլալիք կարգադրութիւններով խիստ զբաղած եմ, ուստի կը խնդրեմ Ձեր Վսեմութենէն որ այսօրեայ բացակայութեանս եւս ներողամիտ գտնուիք։

Մնամ ամենայն յարգանօք
Ազգային Երեսփոխան
Գրիգոր Ղազարոսեան

3 Օգոստոս 1884
Սամաթիա

(Ցեռ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք սոյն դիրն։ Սակայն հարկ է գիտնալ միանգամայն թէ՝ Ղազարոսեան էֆէնտի երրորդ բացակայութիւն ունեցած լինելով, Դիւանէս առ ինքն եղած օրինական ազդարարութեան 'ի պատասխանի՝ փութացեր է գրել այս նամակն։ Ուստի կը մնայ ժողովդ որոշել թէ՝ յիշեալին սոյն բացակայութիւնն իրրեւ օրինաւոր կուզէ՞ ընդունել թէ ոչ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ռ. ԷՖ. — Կարծեմ թէ այդ տեսակ պատճառաբանութիւններ արդարացուցիչ չ'են կրնար նկատուիլ, մանաւանդ թէ՝ ես Զատիկի օրը մինչեւ երեկոյ Սամաթիոյ վարժարանն լինելով, բնաւ հոն չ'տեսայ զՂազարոսեան էֆէնտի։

Ատուած խիղճ տայ մեր ժողովականաց, որք մէկ մէկ ոչինչ պատճառներով միշտ բացակայ կը մնան ժողովէս և պատճառ կ'ըլլան ազգային գործոց երեսի վրայ մնալուն։ Տեսէ՞ք սա ժողովիս վիճակին. մարդ չ'կայ։

Կան կարգ մը Երեսփոխաններ, որք երբ Կաթողիկոսական և կամ Պատրիարքական ընտրութեան խնդիր մէջ տեղ ելնէ, յայնժամ միայն կը փութան երեւնալ, իրրեւ թէ միայն այդ երկու խնդրոց համար երեսփոխանական պաշտօնն ընդունած լինէին, իսկ այս տեսակ պիւտճէի և այլ կարեւոր խնդրոց յուզման պահուն ո՛չ կուգան և ո՛չ կ'երեւանցատուի բան է այս։

Երեսփոխան էֆէնտիներ. պէտք է կամ մեր այս ընթացքն փոխեմք, և կամ այն է որ խրոմին հրաժարիմք և տեղի տամք նորեկ և գործող Երեսփոխանաց։ Եթէ մեր այս անտարբեր ընթացից մէջ փոքր մի եւս շարունակեմք մնալ, գիտցած եղիք որ այս Երեսփոխանութիւնն պիտի լմնայ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով զՂազարոսեան էֆ.) Ղազարոսեան էֆէնտի, չ'եմ կրնար թոյլ տալ որ երեսփոխանի մը բացակայութեանն պատճառաւ, ամբողջ երեսփոխանութիւնն մէկ ջրով լուար։

Պէտք է գիտնալ թէ՝ այժմ խնդիրը Ղազարոսեան Գրիգոր էֆէնտիի բացակայութեան օրինաւորութեանը և կամ ոչ-օրինաւորութեանը վրայ է, և ատկից դուրս իրաւունք չունիք ուրիշ խնդրոյ մէջ մտնելու :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ո՛չ, Ատենապետ էֆէնտի, կ'արժէ որ խօսիմ, վասնզի ընկերական խնդիր է այս :

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Ես Քրիստոստուր էֆէնտիի արած դիտողութիւններն մէկ կողմից իրաւացի կը գտնեմ : Սակայն կան մեր մէջ երեսփոխաններ, որոնք ո՛չ թէ իրենց անձնական զբաղումներից պատճառաւ, հապա Ազգային ուրիշ պաշտօններ ունենալնուն համար է որ կը պարտաւորին բացակայ մնալ : Բայց ի՞նչ ըսելու է այն կարգ մը եկեղեցական երեսփոխաններուն, որոնք ո և է գործ չ'ունենալով հանդերձ, դարձեալ բացակայ կը մնան :

Այս կէտիս վրայ ա՛չ որ ուշադրութիւն դարձուցած և դիտողութիւն արած է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ով ո՞ր ալ ըլլայ, յանցաւոր է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վերջին կը յայտարարեմ թէ՝ այս պահուս ժողովոյս ներկայացեալ խնդիրն է պարզապէս սա բացակայութեան գիրն և հարկ է մի միայն անոր վրայ խօսիլ և որոշել թէ՝ իրրեւ օրինաւոր կրնա՞յ նկատուիլ թէ ո՛չ :

Իսկ գալով ընդհանուր բացակայութեանց խնդրոյն, կրնայ ժողովդ ասի զատ խնդիր մը ընել և վիճաբանիլ անոր վրայ :

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Ես կ'առաջարկեմ որ, քանի որ այդ Պատ. երեսփոխանն ուրիշ ազգային գործով մը պարտաւորուած է բացակայ մնալ այսօր, պէտք է ժողովս իրրեւ օրինաւոր նկատէ այդ բացակայութիւնը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քրիստոստուր էֆէնտի իւր դիտողութեանց մէջ այս ժողովիս արժանապատուութեանն ալ դպաւ, որ արդարացի չէ, վասն զի երեսփոխանաց ոմանց բացակայութիւնն Ազգային կենսական գործոց հետ մնալուն պատճառ չի կրնար ըլլալ :

Խնդիրն այժմ Ղազարոսեան Գրիգոր էֆէնտիի վրայ է, որ իրրեւ նորեկ երեսփոխան մը՝ բացակայութեանց մասին մեր ներքին Կանոնագրի տրամադրութեանց անտեղեակ գտնվ, այնպէս մը կարծեր է որ իւր յառաջ բերած պատճառն ալ կրնայ իրրեւ օրինական նկատուիլ, . . :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Ընդմիջելով) Բայց կ'ըսեն թէ օրէնսգէտ է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ուստի ես կ'առաջարկեմ որ ժողովս այս անգամի համար թոյլատուութիւն ընէ իրեն, ազդարարելով վասնզամայն թէ՝ իւր յառաջ բերած պատճառն օրինական չէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Խօսք կո՛ւզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թեր ու դէմ մի անգամ խօսուեցաւ, և արդէն խնդիրն ալ տեւի խօսիլ չ'վերցներ : Ուստի ժողովդ քուէին կ'ենթարկեմ սոյն բացակայութեան գրոյն օրինաւորութիւնն կամ ոչ-օրինաւորութիւնը :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Օրէնքը գործադրեցէք Ատենապետ էֆէնտի : Այդ տեսակ պատճառաբանութիւն մը բնաւ ներելի չէ, զի եթէ մենք ալ բացակայ մնամք, յանկարծ մեզ ալ պէտք է ներել, վասն զի դպրոցական խնդրովք կ'զբաղիմք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէրպէրեան էֆէնտի, ժողովոյս քուէն միայն կրնայ որոշել ներկայ բացակայութեան օրինաւորութիւնն կամ ոչ-օրինաւորութիւնը։

Այս յայտարարելով, Ատենապետ էֆէնտի ժողովոյ քուէին կ'ենթարկէ խնդիրն, որ 5 քուէի դէմ մեծամասնութեամբ Ղազարոսեան Գրիգոր էֆէնտիի բացակայութեան օրինաւորութիւն կը մերժէ, հետեւարար երեսփոխանութենէ չորրորդ բացակայութեամբ հրաժարեալ կը համարի։

3.

[Հրաժարագիրը յ'երեսփոխանութենէ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր պաշտօնակիցներէն Յակոբ Գուրգէն և Շիշմանեան Պողոս էֆէնտիք անձնական գրաղմանց, և Զէրբէդեան Յարութիւն էֆէնտի ճամբորդութեան պատճառաւ իւրեանց երեսփոխանական պաշտօնէն հրաժարական գրած լինելով, կը փութամ ժողովոյդ ներկայել զանոնք կարդաւ։

Ատենապետ էֆէնտի կը հրաւիրէ զԱտենադպիր էֆէնտի ընթեռնուլ նախ Յակոբ Գուրգէն էֆէնտիի հրաժարագիրն։

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Երեսփոխանական Պատկառելի ժողովոյ.

Անձնական գրաղմանցս ծանրութիւնն պարտաւորած է զիս հուսկ ուրեմն ցաւօք սրտի տալ հրաժեշտ իմ երեսփոխանական պաշտաման, զոր յանձն առած էի վարել ըստ կոչման իմ մեծարոյ ընտրողաց։

Այսու, տէր Ատենապետ, ոչ թէ կամիմ խուսափիլ յազգային գործոց, այլ կը բաղձամ առաւել պարապով և առաւել անդորր սրտիւ ծառայել իմ ազգիս կրթական և գրական ասպարիզին մէջ, որում նուիրեալ եմ 'ի մանկական տիոց։

Աղաչելով ուրեմն զՁեզ, Վսեմաշուք Ատենապետ Տէ՛ր, զի հաճիք դնել զիմ հրաժեշտն առաջի Պատկառելի ժողովոյդ հանդերձ ամենախորին մեծարանօքս։

Մնամ անձնանուէր ազգիս
Յ. Գուրգեն

2/14 օգոստոս 1884
Յօրթաքէօյ

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդեօք ժողովդ այն պարզ հրաժարագրին ընդունելութեան համա՞ձայն է՞ թէ ոչ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Կ'առաջարկեմ մերժել այդ հրաժարականն։

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Պարզ հրաժարականը ուղղակի ժողովոյս ընդունելութեան կ'ենթարկին, և ինչպէս տակից առաջ Պապօեան էֆէնտիի և այլոց կողմանէ ներկայացեալ պարզ հրաժարականներն ընդունեցինք անմիջապէս, նոյնն պէտք է ընել նաեւ ներկայ հրաժարագրի մասին։

ՄԻ ՔԱՆԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ. — Ասի ժողովին գիտանալու բանն է։

Ուրիշ խօսք ուզող չ'լինելով, Ատենապետ էֆէնտի ժողովոյ քուէին կ'ենթարկէ այն պարզ հրաժարականն որ կը մերժէ զայն 6 ի դէմ 7 քուէով։

Հետևաբար Կ'ՈՐՈՇՈՒԻ հրաւիրել ՂԶՈՒԶԷՆ Յակոբ Էֆէնտի շարունակել զիւր երեսփոխանական պաշտօնն։

Սոյն քուէարկութեան մէջ ձեռնպահ կը մնան 18 երեսփոխանք։

(ՅԵՏ ԽՈՒԷԲԻՈՒԹԵԱՆ)

ՁԵՐԱՋ Մ. ԷՖ. — Սոյն պարզ հրաժարագիրն մերժելով, ժողովս օրինաց մասին զեղծում մը գործած եղաւ։

Նոյնպէս Ատենապետ էֆէնտի ժողովոյ քուէին կ'ենթարկէ Շիշմանեան Պողոս և Զէրքէզեան Յարութիւն էֆէնտիներու հետևեալ պարզ հրաժարականքն։

Մեծապատիւ Ատենապետ էֆէնտի Ազգային Երեսփոխանական ժողովոյ.

Անձնական զբաղումներս բնաւ չնեղելով որ Պատկառելի ժողովոյդ Նիստերուն կարենամ փափաքանաց համեմատ ներկայ գտնուիլ կանոնաւորապէս, խնդրեմ հաճիք ներկայիս ընդունիլ իմ հրաժեշտս յ'երեսփոխանութենէ և զայս առանց ոևէ դիտողութեան։

Ընդունեցէք իմ խորին յարգանաց հաւաստիքն։

Պողոս Շիշմանեան

19/31 յուլիս 1884
Կալաթա

Վսեմ. Ատենապետ էֆէնտի
Ազգային ժողովոյ.

Հարկադրեալ ըլլալով 'ի պաշտօնէ Կ. Պոլսէն մեկնիլ, այլ ևս անկարելի է ինձ յաճախել Պատկառելի ժողովոյդ նիստերուն։

Ուստի մատուցանելով հրաժարականս կը խնդրեմ որ Պատկառելի ժողովդ հաճի զայն ընդունիլ, և ընդ նմին իմ խորին յարգանաց հաւաստիքը։

Երեսփոխան Տրապիզոնի
Յ. Զէրքէզեան

25 Յուլիս 1884
Կ. Պոլիս

որք Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ վիճայնութեամբ։

4

Տեղեկագիր Երեսփոխանական ընտրութեան Միջագիւղի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութեան Քաղաքական ժողովոյն կողմանէ երեսփոխանական ընտրութեան տեղեկագիր մը կայ Դիւանիս վրայ, զոր կը փութամ ներկայել ժողովդ, հանդերձ իւր յարակից պաշտօնագրերով։

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի
Ազգային Երեսփոխանական ժողովոյ.

Մայրաքաղաքիս Միջագիւղի թաղէն Երեսփոխան ընտրուած է,

Մեծ. Ստեփան էֆէնտի Տամատեան որ ստանձնած է սոյն պաշտօնն։

Քաղաքական ժողովն ընտրելոյն օրինական հանգամանքները քննելով՝ ըստ ամենայնի համաձայն կը գտնէ Սահմանադրութեան տրամադրութեանց, և կը փութայ ներկայ ծանօթագրով ընտրութեան տեղեկագիրն և ընտրելոյն յանձնառութեան գիրն ներկայել Պատկա-

ռելի Ժողովոյդ 'ի քննութիւն և 'ի պարտ ու պատշաճ անօրէնութիւն։

Մնամք աղօթարար

Ի դիմաց Ս. Պատրիարք Հօր

Փոխանորդ Նորին

Գեորգ Ծ. Վրդ. Բուսմուգլեան

Մնամք յարգանօք

Ի դիմաց Ազգային Վարչ. Բաղ. Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Ն. Այվազեան Ս. Մարտիրոսեան

26 Յուլիս 84

Կ. Պոլիս

Ամենապատիւ Բարձր Սրբազան Հայր Նախագահ Ազգային Ժողովոյ.

Ըստ բարձր հրամանի Սրբազնութեանդ՝ Գիւղիս հրաժարեալ երեսփոխան Նորատունկեան Վսեմ. Յակոբ էֆէնտիի տեղ նոր ընտրութիւն կատարելու համար Ընտրողական Ժողով դումարելով, քուէարկութեան ձեռնարկեցինք ամսոյս 3 ին կիւրակէ օր։

Գիւղիս 110 ընտրողներէն միայն 55 անձինք մասնակցեցան այս առաջին քուէարկութեան, որոց 31 ը նամակաւ և 24 ը անձամբ. այլ սակայն բացարձակ արդիւնք չը գտանալուն՝ յաջորդ կիւրակէ, 10 Յունիսի, առաւելագոյն քուէ ստացողներէն հետևեալ երկու անձանց վրայ որք են՝

Գաբրիէլ Էֆ. Դաբրիէլեան քուէ 13
Ստեփան » Տամատեան » 12

համեմատական քուէարկութիւն կատարուեցաւ 37 քուէարկուաց մասնակցութեամբ, և քուէից առաւելութեամբ Ազգ. երեսփոխան ընտրուեցաւ Ստեփան էֆէնտի Տամատեան քուէ 23։

Ուստի ընտրական հաւանութիւնը ապահովեալ՝ կը փութամք տեղեկագրել առ Ձերդ Բարձր Սրբազնութիւն 'ի պարտ ու պատշաճ անօրինութիւն։

Մնամք Ամեն. Բարձր Սրբազնութեանդ

Խորին յարգանօք

Նախագահ Ընտրողական Ժողովոյ

Յակոբ Ծ. Վրդ. Աշուտ

17 Յունիս 1884

Օրթաքէօյ

Գերապատիւ Տէր.

Ստացայ Ձեր Գերապատութեան 12 Յունիսի գրութիւն՝ որով կը տեղեկացնէք ինձ, Օրթագիւղի թաղեցւոց կողմէն, 10 Յունիսի կիւրակէ օրը, Ազգային Ժողովոյ երեսփոխան ընտրուած լինելս։

Յայժ զգալի է ինձ, և մեծ պատիւ կը համարիմ գիւղիս Ազգայնոց այս վստահութեան ցոյցն առ իս, պէտք չանամ որչափ որ ժամանակս և կարողութիւնս կը ներեն արժանանալ այն պաշտօնին յ'որ կը կոչէք զիս։

Ընդունեցէք, Գերապատիւ Տէր, իմ խորին յարգանաց հաւաստին։

Ս. Տամատեան

14 Յունիս 84

Կ. Պոլիս

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ սոյն տեղեկագրին վրայ դիտողութիւն ունեցող չկայ, Ժողովոյ վաւերացման կենթարկեմ զայն։

Ոչ աք յ'երեսփոխանաց դիտողութիւն ընելով սոյն տեղեկագրին օրինաւորութեան վերայ, Ատենապետ Լֆէնտի քուէի կը դնէ զայն որ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ միաձայնութեամբ։

Հետևաբար Ատենապետ Լֆէնտի Ազգային երեսփոխան ԿԸ ՀՌՉԱԿԷ

Ստեփան Էֆ. Տամատեան

Ե.

Միջադէպ

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ատենապետ Էֆէնտի, ո՞վ է ժողովոյս Նախագահն։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյս բնական Նախագահն է Ս. Պատրիարք Հայրն, և երբ բացակայ է ինքն, ներկայ եկեղեցականաց ամենէն ստորինաւորն կը վարէ առժամեայ Նախագահի պաշտօնն։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ուրեմն անուանեցէք։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ժողովոյ առժամեայ Նախագահն անուանելու իրաւունքը մի միայն Ս. Պատրիարքն կը վայելէ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդպէս է, մանաւանդ թէ՝ ժողովոյ տարեշրջանին կամ արտասովոր նիստերու, բացման և փակման միջոցներուն միայն անհրաժեշտ են։ Իսկ սովորական նիստերու մէջ, չ'եմ կարծեր թէ իրր անհրաժեշտ պայման մը նիստուն Նախագահին անձնական կամ փոխանորդական ներկայութիւնը, մինչդեռ ժողովոյ բարեկարգութեանն հոկելու պաշտօնը, Մայր-Դիւանին յանձնուած է ըստ օրինի։

Գ.

Շարունակութիւն վիճաբանութեան 'ի վերայ Ազգային կեդրոնական ելմտացոյցի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէեւ մեր Օրակարգի երկրորդ խնդիրն է, ինչպէս գիտէք, Վարչութեան տեղեկագիրն 'ի մասին Երուսաղէմայ պարտուց բարձման, բայց ըստ որում յիշեալ տեղեկագիրն այսօր եւս չ'ներկայացուց Դիւանս, ուստի կ'անցնիմ մեր Օրակարգի երրորդ խնդրոյն, որէ՝ շարունակութիւն վիճաբանութեան 'ի վերայ Կեդրոնական Ելմտացոյցի։ Ուստի նախընթաց նստէն խօսիլ տուումարին մէջ նշանակեալ, և այն պահուն ներկայ գտնուող Պէրպէրեան Ռէթէոս Էֆէնտիին է խօսքը։

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Բեմն ելնելով) Ընդհ. ժողովոյ վերջին նստին վրայ խօսելով, մի քանի երեսփոխան խմբագիրներ կարծիք յայտնած էին թէ՝ ժողովս տարարդիւն վիճաբանութիւններ բրած էր և չ'էր կրցած տակաւին մի որ և է եզրակացութեան հասնիլ Ելմտացոյցի մասին։ Բայց ըստ իս, տարարդիւն պէտք չէ նկատել եղած վիճաբանութիւնքն քանի որ խնդիրն դատարակութեան պիտանի վրայ է և ոչ թէ լոկ Ելմտացոյցի մը, այսինքն սկզբունքի մը վրայ։ Խնդիրն ապա կենսական է և կ'արժէ որ խօսուի նորա վրայ. որչափ աւելի կարծիքներ 'ի լոյս գան ու բաղխուին միմեանց հետ, այնչափ աւելի մաքերը կը լուսաւորուին և կը դիւրանայ խնդրոյն բանաւոր լուծումը։ Ուստի և ես աւելորդ չեմ համարիր իմ կարծիքն ալ յայտնել համառօտակի այս կէտիս վրայ։

Բայց հարկ է խօսիլ զերծ անձնական նըկատումներէ, կրքերէ. կրքերը միշտ բանականութեան անվրէպ առաջնորդներ չ'են եղած։ Հոս կուգամք մեր կարծիքը յայտնելու և ոչ թէ

մեր կրից բայադրութիւն տալու, միմեանց մտքերը լուսաւորելու և ոչ թէ սրտերը վիրաւորելու, և ինչպէս ըսի, այսպիսի նկատումներէ առաջնորդուելով ոչ երբէք կարող եմք հասնիլ իմաստուն եզրակացութեանց։ Զօրօրինակ. Փափազեան էֆէնտի խնդրոյն վրայ խօսեցաւ, բայց որովհետև ինքն միտ հակում մ՚ունի Պատրիարքաց և Վարչութեանց աբարքներն քննադատելու, այս խնդրոյ մէջ ալ ասոնց դատ դոհացնելու իր այդ յօժարութիւնն ու վճիռներ արձակեց զրաս, համոզուած եմ թէ երբ պաղ արեամբ մտածէ, ինքն ալ չպիտի ուզէ գործադրուած տեսնել։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է. — (Ընդմիջմամբ) Մինչև դերեզման իմ համոզումներս հաստատ են։

ԱՏԵՆԱՊԵՏ Է. — Պէրպէրեան էֆէնտի. դուք իսկ էիք պահ մ՚առաջ յայտարարողն թէ՝ ընդհանուր խնդրոյ մը վրայ վիճաբանութեան պահուն, պէտք չէ անձնականութեանց մէջ մտնել։

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. Է. — (Շարունակելով) Փափազեան էֆէնտին ուզերդ կը գտնէ Պատրիարքարանի մէջ վատնուած դումարներն և կ՚առաջարկէ դպրոցաց յատկացնել զանոնք, նոյնպէս լաւագոյն կը գտնէ որ Պատրիարք և պաշտօնեայք երթան դպրոցներն ուսուցանեն և վարժարանաց բաշխուին Պատրիարքարանի մէջ գործածուած թուղթ, գրիչ, մելան ևն։ Կը հարցնեմ, Փափազեան էֆէնտին գոհ կ՚ըլլա՞ երբ արդարև իր առաջարկածին նման վարուինք։

Ամեն ժողովրդոյ մէջ վարչութիւն կոչուած պաշտօնական մարմին մը, անհրաժեշտ է յարաբերութեանց ներդաշնակութեան և ընդհանուր շահուց պաշտպանութեանն համար. և մենք, որ ո՛չ միայն մեր ներքին, անհատական ու ազգային յարաբերութիւնքն ունիմք, այլ նաև իրրեւ հզաստակ ազգ՝ ամենօրեայ յարաբերութիւններ Կառավարութեան հետ, կրնա՞մք ըլլալ առանց Պատրիարքարանի որ միջնորդն է դոյն յարաբերութեանց։

Ֆրէտերիք Պասդիա տնտեսագէտն գործ մը հրատարակած է, «ինչ որ կը տեսնենք և ինչ որ չենք տեսներ» տիտղոսով հերքելու համար այլ և այլ տնտեսագիտական սխալներ ու նախապաշարումներ։ Նոյն ձեւով կրնամք այս պարագային մէջ ալ ցոյց տալ մեր սխալանաց պատճառը։ Երբ մէկը մտնէ Պատրիարքարան, արդարև կը տեսնէ թղթեր, խումբ խումբ դրագրեր որդ կը գրեն, գ՚ընդօրինակեն, բայց արդիւնքը՝ գործը չ՚տեսներ. գործն հոն չէ որ տեսնէ. նոյնպէս երբ մէկը ժողովոյս դայ, պիտի տեսնէ Երեսփոխաններ որք կը խօսին լոկ, բայց «ո՞ւր է գործ» պիտի ըսէ։ Այս երկուքն ալ իրաց մէկ կողմը միայն կը տեսնեն. գիրն ու խօսքը, բայց այդ գիրն ու խօսքն այն տարաղն են որով կը բայատարուին շատ մը գործեր, այլ և այլ խնդրոյց կարգադրութիւնք, այլ և այլ պիտոյից զոհացմունք, այլ և այլ պակասութեանց դարմանք են։

Եթէ սակայն առարկուի՝ թէ արդիւնք չ՚են համապատասխաններ ակնկալութեանց, կը պատասխանենք թէ ատոր պատճառն ոչ գիրն ու խօսքն է, ո՛չ Պատրիարքարանի գոյութիւնն, այլ մեր շատ մ՚Ազգային թերութիւններն, հանրային օգտին օժանդակելու անյօժարութիւնն ևայլն։

Կը տեսնուի թէ Փափազեան էֆէնտի իրաւունք չէ ունեցած Պատրիարքարանն ուղղերդ հաստատութիւն մը համարելով։ Անհասկանալի և բոլորովին ուղղերդ կը գտնեմ նաև այն ընթերցումն զոր ըրաւ Օտեան Խաչիկ էֆէնտիի մէկ թարգմանութենէն իբր թէ Օտեան գերդաստանին նկատմամբ Զերազ էֆէնտիի ունեցած յարգանաց զօրութեամբ համոզելու համար զԶերազ էֆէնտի դատարակութեան կարեւորութեան վրայ, բայց հարկ կա՞ յայդ մասին համոզելու այնպիսի մէկն որ 'ի տղայ տիոյ ինքզինք նուիրած է դատի-

արակութեան գործին, և բայի ասոի՝ խնդիրը անձ մը համոզելու անձի մ'ետեւէ իյնալով զայն մեր կարծեաց չհաւանելու վրայ չ'է. պէտք է ծողովոյ մեծամասնութեան կարծեաց վրայ ազդեցութիւն բանեցնել, զայն շահիլ։

Զերաղ էֆէնտի շատ յաջողութեամբ պատասխանեց Փախուղեան էֆէնտիի ու հերքեց Նորա ծայրայեղութիւնքն, բայց քանզի մէկ ծայրայեղութիւնը կը տանի ուրիշ ծայրայեղութեան, Զերաղ էֆէնտի ալ անտես ըրաւ երկու սկզբունքներ, որք զոհուած են Եկեղեցայոյցին պատրաստութեան մէջ. մին թէ Վարչութիւնք պարտաւոր են գործադրել ինչ որ կ'որոշէ Ազգային ծողովը. և Տնտեսական Խորհուրդն չէր բնաւ 'ի նկատ առած ծողովոյս 1879ի Նստաշրջանին մէջ տուած մէկ կարեւոր որոշումը որով Ազգային կրթութեան Կեդրոնական ծախուց համար կը սահմանուէր Պատրիարքարանի եկամտից % 10ը. երկրորդ՝ թէ Կեդրոնական իշխանութեան պարտաւորութիւնն է հսկել և առաջնորդել Հանրային կրթութեան. քանզի Վարչութեանց թէ պաշտաման մէջ է զարգացնել հանրային շահերը, շահադործել Հանրային դրամագլուխները, և հետեւաբար մտաւոր ընդհանուր մշակութեան օգտել ու խնամ տանիլ իր առաջին պարտականութիւններէն մին է։ Բայց ահա կը մտնենք բուն խնդրոյն մէջ։

Երբ Վարչութիւն մը Եկեղեցայոյցի պատրաստութեան կը ձեռնարկէ, պարտի իր առջեւ ունենալ սա սկզբունքն թէ՝ Ազգային Եկեղեցայոյցն կը պատրաստուի հանրական պիտոյից վրայ հիմնուելով և ոչ թէ հասոյթից. ըսել կուզեմ թէ նկատողութեան կ'առնուին պէտքերը, կարեւոր ծախքերը, և ըստ այնմ կը կարգադրուի մոց գլուխը, այսինքն մուտքը ելքին հաւասարակշիռ ընել կ'աշխատուի և չէ թէ ելքը մուտքին։ Եթէ ծախուց չհաւասարիր եկամտից գումարը՝ այն ատեն հարկ է դնել հասոյթից նոր աղբիւրներ, տուրքեր սահմանելով և այլ միջոցներ 'ի գործ դնելով։ Մինչեւ իսկ անհատ մը երբ իւր տան պիւտճէն պատրաստէ, իւր կարեւոր պիտոյից վրայ հիմնուիլ պարտաւոր է. թէ և ամեն անհատի համար իւր ունեցած ծախուց դէմ հասութիւներ դնելն դիւրին չէ, բայց տարբեր է ազգի մը կամ ժողովրդեան մը համար, վասնզի հարկաւոր ծախքերն կրնան միշտ հոգացուիլ հանգանակութեամբ, հասարակաց մասնակցութեամբ։

Սակայն կը տեսնեմք թէ՝ մեր մէջ այս կերպով չէ որ կը պատրաստուի Եկեղեցայոյցն, մենք բոլորովին հակառակը կ'ընեմք. մեր ծախքերը կը չափենք մեր ունեցած հասոյթներուն վրայ և մեր պէտքերէն միայն այնչափը կ'ուզեմք գոհացնել որչափ որ կը ներեն մեզ ստաձեռն պատրաստ հասոյթք։ Այս դրութիւն հիմնովին սխալ է և աննպաստ Ազգային զարգացման։

Հիմայ նայինք թէ պէտք մ'է կեդրոնին համար ծախքեր ընել յանուն դատարակութեան. հա՛ս է ահա որ մեր կարծիքներն կը տարբերին Զերաղ էֆէնտիի յայտնած կարծիքներէն, բայց, որպէս ըսի 'ի սկզբան, այս մասին Զերաղ էֆէնտիի ծայրայեղութիւնք հակառակ կողմի ծայրայեղութեան արդիւնքն էին։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Ինչպէս որ հակառակ կողմի ծայրայեղութիւնք եւս Զերաղ էֆէնտիի ծայրայեղութենց արդիւնքն էին։

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Շարունակելով) Այո՛, կընդունիմ Զերաղ էֆէնտիի յայտարարութիւնքն, որովք կը ցուցանէր թէ տեղական ոյժերով Ազգը կարող եղած է ըստ բաւականին յառաջացնել կրթութեան գործը, թէ ասա և 'ի դաւառս ունիմք բաւական թուով վարժարաններ, թէ առանց վարժապետանոց ունենալու կրցած ենք ունենալ կարող ուսուցիչներ, թէ վերջապէս կը-

թութեան մասին յուսահատական կացութեան մէջ չենք և թէ ահաւասիկ կրթական ընկերութիւններն ալ ազգաց գաւառաց պէտքերը հոգալու կը դիմեն։ Այո՛, ասոնք ճշմարիտ են, թաղերն ու գաւառները կը գործեն, կրթական ընկերութիւնք կը գործեն ու անկարելի չէ դնել լաւ ուսուցիչներ. բայց այսու ամենայնիւ պէտք է որ Կեդրոնն ալ հսկէ, ընդհանուր ուղղութիւն տայ, եղած ջանքերը խրախուսէ, անտարբերները դրդէ, տկար այժերը միացնէ ու զօրացնէ և ջանայ Կեդրոնին մէջ աւելի կամ նուազ բարձրագոյն կրթութիւն մ'աւանդել և ուսուցանելու արուեստին հմուտ ուսուցիչներ պատրաստել։ Առանց Կեդրոնին հսկողութեան և առաջնորդութեան յաճախ ընդունայն կը վատնուին ճիւղերու մէջ մեծագումար դրամներ 'ի չգոյէ փորձառու առաջնորդի և իմաստուն հրահանգաց։ Կրցած եմ ունենալ դաստիարակներ կարող օգտակար կերպիւ ծառայելու կրթութեան գործին, և իմ մասիս շնորհակալութիւն կը յայտնեմ Ձերազ էֆէնտիի որ առանց վարժապետանոցէ մ'ելած ըլլալու ուսուցչական ասպարէզին մէջ օգտակար եղող անձանց իբր օրինակ յիշած էր անունս, բայց անուրանալի է որ հաղուագիւտ են լաւ ուսուցիչներ և եղածներն բախտին կը պարտիք, կարելի՞ է սակայն մեր մանկտոյն ապագայն է ազգին ճակատագիրն բախտին մատնել։

Կ'առարկուի թէ Եւրոպա իսկ դեռ մօտ ատեններու մէջ սկսած է լրջօրէն զբաղիլ կրթական խնդրով ու մեծ գումարներ դնել իւր պիտոյքին մէջ ի նպաստ հանրային կրթութեան։ Պէտք է գիտնալ թէ Եւրոպական տերութեանց այդ նոր հոգածութիւնն նախակրթութեան մասին է որ յառաջագոյն թաղուած էր բոլորովին գաւառաց և թաղից նախանձեռնութեան. բայց միջին դարէն 'ի վեր Եւրոպիոյ մէջ կային բարձրագոյն կրթութեան յատկացեալ հաստատութիւններ. յեղափոխութենէն յառաջ Գաղիա ունէր արադեմիներ, լիւսիվերսիտներ, գոյէժներ, և այլ և այլ պետական դպրոցներ։ Սակայն նոյն իսկ նախակրթութեան կանոնաւոր կազմակերպութեան Եւրոպական ազգաց վերջերս ձեռնարկած լինելն փա՞ստ մ'է որ մենք՝ իբրեւ քաղաքակրթութեան մէջ յետնեալ ժողովուրդ՝ նոցա օրինակին չ'հետեւինք այժմէն և օգուտ չ'քաղենք նոցա փորձառութենէն ըստ մեր կարողութեան։ Հեռագրի, չոգենաւի, չոգեկառքի, հեռաձայնի գիւտերն ալ և դեռ շատ ուրիշներ զրեթէ նոր բաներ են, այլ՞ապէ՞ ուրեմն որ Եւրոպացւոց հանճարոյն այս արդիւնքներէն չօգտինք ու սպասենք դարերով որ մեր կարգը գայ։

Կեդրոնին մէջ ունիմք մի քանի թաղային կանոնաւոր Ուսումնարաններ ու մէկ երկու մասնաւոր երկրորդական դպրոցներ. բայց ասոնք բաւական չեն գոհացու

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. Է. — (Շարունակելով) Կեդրոնին պարտքն է՝ ըստ եւ հակոդութիւն 'ի գործ դնել թաղային ու գաւառական դպրոցաց վրայ. արդ Կեդր. Ուս. Խորհուրդն ետ է ուղղ կատարել իւր այս պարտքն ազգային դպրոցներն կրթական շրջանակներու բաժնելով և այցելու տեսուչներ յանկացնելով, կրնա՞ յաջողիլ առանց իւր տրամադրութեան տակ գրամ ունենալու որպէս զի վճարէ իւր դրկած տեսուչներն։

Այս բեմին՝ քիչ շատ բարձր կրթութեան մ'առանդման պէտքին վրայ խօսելով՝ Աղաբէգեան էֆէնտի՝ կարծիք յայտնեց թէ Ազգին պարտքն է միայն ազգային կրթութիւն տալ, ազգային ուսումները զարգացնել, զոր օրինակ ազգային կրօնք, ազգային պատմութիւն, ազգային լեզու և գրականութիւն, և ոչ թէ Ֆիզիկի և Շիմիի նման եւրոպական գիտութիւններ։ Կը զարմանամ որ Աղաբէգեան էֆէնտի այսպէս կը խորհի. մի՞թէ գիտութիւնք ազգ ունին, մի՞թէ կա՞յ ազգային և օտարազգի բընազիտութիւն, բնաբանութիւն, ուսողութիւն և այլն։

Լոկ Ազգային ուսմունք բաւակա՞ն են յառաջ բերելու համար զօրաւոր կերպով կրթուած սերունդ մը. միակողմանի կրթութիւն մ'ոչ ոչ, սակէ յառաջ մեր նոյն իսկ նշանաւոր կոչուած վարժարանաց մէջ զանց առնուած էին բնական գիտութիւններն, գրական ուսմունք. ի՞նչ յառաջ կուգար անոնցմէ. — Իրենց մտաց մէջ հաւասարակշռութիւն չունեցող թերի ուսումնականներ։ Ի՞նչպէս կարելի է ուրանալ գիտութեանց օգտակարութիւնն, երբ թէ նոքա ոչ–ազգային ուսումներ լինին։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է. Աղաբէգեանց էֆէնտիի ըսածներն ալ ուրիշ տեսակ ծայրայեղութիւնք են։

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. Է. — (Պատասխանելով) Ես բնաւ չեմ ժխտեր գիտութեանց կարեւորութիւնն։ Կարդացէք ատենագրութեան մէջ իմ խօսքերն։

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. Է. — Ատենագրութեան մէջ գրուածն ալ ըսածիս նման է։ Կը զարմանամ դարձեալ որ ինչպէս Աղաբէգեանց էֆէնտի, որ հմուտ է լեզուաբանութեան, կրցաւ ըսել թէ՝ մենք ազգային լեզու իսկ չունինք։

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. Է. — Այո՛, չունինք։

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. Է. — Այլ և այլ գաւառաբարբառներու գոյութիւնն արգե՞լք մ'է հայ լեզուին գոյութեան. ո՞ր ազգի լեզու իր գաւառաբարբառները չունի։ Եթէ լեզու չունինք, ի՞նչ լեզուով 'ի լոյս եկած են ապա մեր հին և նոր մատենագրութիւնք. ի՞նչ լեզուով ինք Աղաբէգեան էֆէնտի յայտնեց հոս իր տեսութիւններ և ես ի՞նչ լեզուով կը պատասխանեմ իրեն։ Դարձեալ, ազգային կրօնք կ'ըսուի. առանց գիտութեանց ուման ես կատարեալ կրօնք չեմ հասկնար. կրօնից ուսումը նպատակ ունի ճանչցուցնել ամենայնի Արարիչը և ներշնչել նորա սէրը, առանց ճանչնալու Արարչին գործն ու նորա օրէնքներն՝ մարդ կրնա՞յ լաւ ճանչնալ Արարիչն ու նմա հպատակիլ կատարելապէս։ Աղաբէգեան էֆէնտի լաւ գիտէ որ հին ազգաց նուիրական մատեաններն ամփոփումն էին ժամանակին գիտական վարդապետութեանց, իրենց մէջ կը պարունակէին ժամանակին աշխարհագրութիւնը, երկրաբանութիւնը, բնագիտութիւնը և այլն։

ԱՏԵՆԱԳՊԵՏ Է. Է. — Պէրպէրեան էֆէնտի, կարծեմ թէ լաւագոյն կ'ըլլայ Զեզ դառնալ խնդրոյն, վասն զի կը տեսնեմ որ կը շեղիք։

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. Է. — Այո՛, կը դառամ խնդրոյն։

Կրնայ ըսուիլ թէ. — Լաւ, ընդունեցանք այդ պէտքն, բայց դրամն է որ կը պակսի։ Սակայն ես կը ըսեմ թէ՝ եթէ անգամ մը պէտքի մ'իրականութեան համոզումիմբ և արդիւնք ցուցնելու սկզբնաւորութիւն մ'ընենք, դրամ չ'պակսիր և նա ինքնին կուգայ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Շատ ճշմարիտ է։

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Այս մասին ես ևս համակարծիք եմ Քրիստոսուր Էֆէնտիի. պէտք է որ նախ մեր պիտոյից վրայ համոզուինք ու ազգայնոց մտայ մէջ համոզում գոյացնենք. յետոյ պէտք է գործի սկզբնաւորութիւն ընել, քիչ շատ արդիւնք ցուցնել։ Երբ ճանչցուած և ընդունուած պէտքի մը համար Ազգը զլացած է իւր դրամէ։ Ահա այսօր Միացեալ—Ընկերութիւնը տարեկան 3—4000 ոսկւոյ գումար մը կ'առնուն ազգէն, երբ այդ կրթական հաստատութիւնն չէր հիմնուած, այդ գումարին ոչ մի լումայն կ'առնուէր, բայց այսօր Միացեալ—Ընկերութիւնը ազգային հաստատութիւն մ'են, հիմնարկութիւններ ունին, գործ և արդիւնք ունին և երբ կը դիմեն Ազգին, ազգայինք յօժարակամ կը մասնակցին ծախուց։ Եթէ Հիւանդանոց մը չունենայինք արդէն, մեր վարանումներովն գուցէ հիմա չը կարենայինք հիմնել այդպիսի հաստատութիւն մը. բայց անգամ մը հիմնուած է, կը կատարէ իւր գործը, և Ազգը նորա բայը ամէն տարի կը գոցէ սիրով։ Այսպէս է Կեդրոնական Վարժարանին ալ համար. քանիցս խօսուած է սորա վրայ. միշտ կը վարանիմք, հասոյթը կը փնտռենք, ծախքը ինչպէս պէտք է հոգալ կ'ըսենք։ Ես կ'ըսեմ թէ թէև տկար միջոցներով ու տկար սկզբնաւորութեամբ անգամ մը բացուելու ըլլայ, հասոյթն ինքնին պիտի ըստեղծուի. վասն զի տուողը պիտի տեսնէ թէ իւր օգտին համար կուտայ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ճշմարիտ է։

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ազգային տրոց գանձման էական մէկ պայմանն է վստահութիւն. Ժողովուրդը պէտք է վստահ լինի որ իւր տուած դրամն իւր տեղը կը հասնի և օգտակար նպատակի մը կը գործածուի։ Երբ մէկ կողմանէ գործ, արդիւնք ցուցնենք ու միւս կողմանէ հրատարակենք տուրք տուողներու անուններն, այն ատեն վստահութիւնն ինքնին կը գոյանայ և կը դիւրանայ տրոց գանձումը։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Երբեմն կը հրատարակուէր, երբ ես անդամ էի Տնտես. Խորհրդոյ։

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Շարունակելով) Եւ միթէ՞ մեզ հասոյթի ուրիշ աղբիւրներ կը պակսին։ Վանքերն քի՞չ եկամուտի աղբիւրներ են, ինչպէս իրաւամբ դիտեց Աղաբէգեանց էֆէնտի։ Ո՞ւր են այնքան ազգային կտակներն և հանգանակութեանց յուսելեաւ արդիւնք, ինչպէս են Սովելոց Յանձնախմբին դրամը, Մանկեանի կտակած գումարը, բարեգործական ընկերութեանց դրամագլուխը և ուրիշներ։ «Դրամ չ'կայ» կ'աղաղակենք, և ասոնց անդին, ասոր անոր ձեռքն անբեր կը թողուինք մեծագումար կարեւոր դրամագլուխներ։

Սա ճշմարիտ է որ մեր Վարչութեանց քով դաստիարակութեան ընդհանուր ծախուց համար դրամ տալու անյօժարութիւն մ'եղած է միշտ, նոյն իսկ դրամ եղած ատենն ալ։ Հանգուցեալ Խիէ քէֆեան էֆէնտին ամսական 20 ոսկի կը տուէր, ինչոր կ'ընէ 240 ոսկի տարեկան, որ միանալով ինչ ինչ այլ ծախուց հետ կը կազմէր 300 ոսկւոյ գումար մը։ Արդ ինչ որ էր քանի մը տարի յառաջ Պատրիարքարանի անուանին վիճակն՝ նոյն է կարծես հիմայ ալ, ի՞նչու որեմն այն ատեն կարելի

էր այսպիսի գումար մը յատկացնել կրթական Կեդրոնական ծախսուց և միևնոյն գումարին վճարումն անկարելի համարելով անգործութեան դատապարտել Ռուս. Խորհրդոյ մէկ ծրագիրն Կեդրոնական վարժարանի մասին։ Բայց այն առեն կրթական Խորհրդականն, Մամիկոնեան Միքայէլ էֆէնտի, Վարչական ժողովին անդամ էր և ուղղակի ստիպում բանեցնելով կարող էր ստանալ, մինչդեռ հիմայ Ռուս. Խորհուրդն Քաղաքական ժողովոյ ստորադաս մարմին մ'է և չէ կարող ուղղակի ազդեցութիւն ունենալ նորա որոշմանց վրայ։ Ահա սար համար վերջերս մինչեւ իսկ մէկ Դիւանադպիր չատ համարուեցաւ Ռուսում. Խորհրդոյ որ հրաւիրուեցաւ փոխել իր նստի օրերն, վասն զի իր Դիւանադպիրն միանգամայն ուրիշ Խորհրդոյ մը քարտուղարութեան կարգեալ՝ նոյն օրերն տրամադրելի չէր • • •։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Էֆ. — Ըսելէ թէ՝ Ռուս. Խորհուրդն ուրիշ խորհուրդներէ ալ ստորադասեալ կը նկատուի։

ՁԵՐԱԶ Մ. Էֆ. — Պէտք է գիտնալ թէ՝ պրոյեկտէն զեղչ եղած է։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Էֆ. — (Առ Ձերազ Էֆ.) Գնա՛յ Պատրիարքարան և պիտի տեսնես թէ՝ ց՛արդ ոչ ոք եկած է։

(Աղմուկ եւ ղիսորութիւնք)

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — (Առ ընդմիջողս) Կարծեմ թէ սովորական ընդմիջմանց սահմանէն կանցնիք։

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. Էֆ. — Կը վերջացնեմ խօսքս, և նկատելով որ ներկայացեալ Ելմտացոյցն արդէն 4 ամիսներէ 'ի վեր գործադրութեան մէջ է, հետեւեալ առաջարկներս կը ներկայեմ Պատկառելի ժողովոյդ։

Կ'առաջարկեմ

Ա. 1884—85 տարւոյ Ելմտացոյցն ընդունիլ առ այժմ, որ արդէն գործադրութեան մէջ է.

Բ. Յանձնախումբ մը կազմել որ Վարչութեան հետ խորհրդակցելով յառաջիկայ Սահմ. տարւոյն համար Ելմտացոյց մը պատրաստէ 'ի նկատ առնելով Ազգային դաստիարակութեան ու Եկեղեցւոյն զարգացման պիտոյքն ու նոցա գոհացում տալու համար յարմար գումարներն նշանակելով ծախսուց ցուցակին մէջ.

Գ. Ազգային Պատրիարքարանի հաստատութիւնները աճեցնելու միջոցներն խորհող ու առ այս Ազգային ժողովոյ տեղեկագիր մը բերելու պաշտօն ունեցող ցանձնաժողով մը կազմել։

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. Էֆ. — Շատ համառօտ պիտի խօսիմ, զի կը կարծեմ թէ այլ ևս եկած հասած է քուէարկութեան ժամը։

Ելմտացոյցի վրայ եղած վիճաբանութիւնը հաստատեցին արդէն դաստիարակութեան կարևորութիւնն, ըսել է թէ սկզբան մասին բոլոր երեսփոխանք համամիտ են և միջոցին մը-րոյ միայն կը տարբերին։ Սակայն կան նաև մի քանի երեսփոխաններ ալ, որք ազգային կեանքն լաւ ուսումնասիրած լինելովին հանդերձ՝ կը հակառակին Ելմտացոյցի մէջ յանուն դաստիարակութեան մի գումար յատկացուելուն։ Զեմ հակնար թէ այդ երեսփոխանք ի՞նչ ըսել կուզեն։

Ես այնպէս կը հաւատամ թէ անտարամբանական է և մինչեւ իսկ ամօթ այս ժողովոյս ելնել Ելմտացոյց քուէարկել առանց մի որոշ գումար նշանակելու անոր մէջ յանուն դաստիարակութեան։

Վարչութիւնն կը յայտարարէ թէ՝ Կեդր. Սնտուկն դրամ չունի. բայց ես ցոյց պիտի

տամ այնպիսի թուանշաններ որբ կրնան զեղջուիլ մեր Եվմատայոյին և յատկայուիլ կրթութեան գործին։ — Ահաւասիկ այդ թուանշանք։

Մեր Եվմատայոյի պաշտօնէից գլխաւոր մէջ նշանակեալ է՝ Հայերէնի Դիւանապետ մը և երեք օգնականք 3250 զրշ. մէկ արձանագրիչ 600 զրշ և չորս ընդօրինակիչք 1400 զրշ։ Ցիշատակեալ օգնականայ մին է նաև Կրոն. ժողովոյ բարտուղարն, որոյ յանձնուած է նաև Խառն ժողովոյ գործերն ալ կատարել. . . :

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — (ընդմիջելով) Խնայողութեան արդիւնք է այդ։ Եթէ Փափաղեան էֆէնտիի առաջարկած պաշտօնէից զեղջն ընդունուի, այդ Դիւանագրէն ուրիշ չատ աշխատութիւններ ալ պիտի պահանջուի։

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — (շարունակելով) Մինչդեռ արդէն Կրօնական ժողովոյ Դիւանին 800 զրշ. ամսական նշանակուած է, և այս ֆարտուղարն է որ Խառն ժողովոյ ատենագրութեանց խմբագրութիւնն և միւս գործերն ալ կը կատարէ։

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊՍ. — (ընդմիջմամբ) Սխա՛լ է. Խառն ժողովոյ բոլոր գործերն չ'կատարէր, այլ մի միայն ատենագրութիւններն կը պատրաստէ։

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ուստի ես կը կարծեմ թէ՝ երբ Փաղ. ժողովն Դիւանապետ մ'ունի որ կը խմբագրէ և երեք օգնականք, յայնժամ արձանագրիչի մը համար տրուած 600 զրշն աւելորդ է, ինչպէս նաև չորս ընդօրինակիչներու համար տրուած 1,400 զրշի գումարն. ինչպէս կը յայտարարէր նաև անցեալ նիստերն միայն մէջ ձանրմեան էֆէնտի։ Երբ զեղջուին այս աւելորդ գումարներն, 2000 զրշի խնայողութիւն մ'ըրած կըլլանք։ Ուստի կ'առաջարկեմ առ այժմ մեր Եվմատայոյի մէջ յ'անուն դատիարակութեան 3000 զրշ. ամսական գումար մը նշանակել, որոյ 2000ը այս կերպով, և պակաս 1000 զրշն ալ կեդր. սընտուկն վճարէ, և եթէ կարող չ'է վճարել, թող իր ունեցած պարտուց վրայ 12,000 զուրուշի պարտք մ'ալ աւելցնէ յ'անուն դատիարակութեան, որ կարծեմ բնաւ մեղադրելի չ'է։

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — (ընդմիջմամբ) Ուրեմն կը խոստովանիք թէ Վարժապետանոցը պարտք ընելով միայն կրնայ բացուիլ։ Դեռ Երուսաղիմոյ Պատրիարքարանն չ'կրցանք պարտքէ ազատել, և ահա Պոլսոյ Պատրիարքարանն ալ կուզուի ծանր պարտուց ենթարկել։

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. (շարունակելով) Եւ ահա ցոյց տուած այս 3,000 զուրուշովս այժմէն իսկ կրնամք բանալ այդ կեդր. Վարժարանն որ ընդհանուր երեսփոխանաց մտածմանց առարկայն եղած է։ Արդարեւ կը խոստովանիմ թէ այդքան գումարով մը կարելի չ'է կրթական բարձրագոյն հաստատութիւն մը կառավարել, բայց հոգ չ'է՝, թող մի անդամ ձեռնարկենք գործին և դրամն ինքնին կուգայ, ինչպէս հաստատեց Պէրպէրեան էֆէնտի, զի այս Ազգն միշտ օժանդակած է և կ'օժանդակէ ազգային հաստատութեանց, բաւական է որ գործ և արդիւնք տեսնէ։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. (Անդամ Տընտեսական Խորհրդոյ) Երեսփոխան Տեարք. ես ոչ իրաւ և ոչ ալ փափաք ունիմ խօսելու, վասն զի արդէն ձեզմէ շատերն խօսեցան և կարծիք յայտնեցին ներկայացեալ Եվմատայոյին վրայ։ Ես մի միայն մի քանի կարեւոր յայտարարութիւններ ունիմ ընելիք։

Երբ Տնտեսական Խորհրդոյ անդամակցութեան կոչուեցանք, Եվմատական ճիւղի հսկողութեան պաշտօնն ինձ յանձնուեցաւ, և չմտածելն ըսելով՝ ես այլ այլոց նման հետաքրքիր ե-

դոյ գիտնալու համար թէ՝ ի՞նչ է պատճառն որ մեր Պատրիարքարանի Եկեղեցւոյն ա՞յս աստիճան խանդաղատեալ վիճակի մէջ կը գտնուի, ուստի նախ երեսփոխանաց ցանկն ուզեցի և տեսայ թէ անոնցմէ հաղիւ մի քանին իրենց ազգային տուրքերը վճարեր են, հետեւաբար հարկ եղաւ նամակ գրել և հրաւիրել զիրենք որ հաճին վճարել իրենց ազգային տուրքերն, բայց այդ հրաւէրին մի քանի երեսփոխանք միայն գործնականապէս պատասխանեցին, և չնորհակալ եմ Քրիստոսատուր էֆէնտիէն որ անձամբ գալով վճարեց իւր ամբողջ ազգային տուրքէ ունեցած պարտքն . . . :

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ժողովոյս անպատուութիւն բերող բանն այդ է ահա, և ոչ Վարժապետանոցի բացման յետաձգումն :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Եթէ բոլոր երեսփոխանք իսկ իրենց ազգային տուրքերն վճարեն, հաղիւ 7,000 ղրշի. աննշան գումարի մը կը հասնի, որ գրեթէ ոչինչ ըսել է մեր նպատակին հասնելու համար :

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ.—(Պատասխանելով) Կարծեմ 38,000 ղրշի. չափ է երեսփոխանաց այդ պարտքն :

(Մէկ քանի նստարանների ընդմիջումնք)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թողէ՛ք Ատենապետն էֆէնտին չարունակել իւր խօսքն :

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — (Շարունակելով) Ես այնպէս կը հաւատամ թէ երբ Երեսփոխան էֆէնտիները կանոնաւորապէս վճարեն նախ իրենց ազգային տուրքերն, պարտականաչութեան առաջին օրինակը իրենք տուած պիտի ըլլան ժողովրդեան և միանգամայն պիտի համոզեն իրենց ծանօթներն ալ որ վճարեն իրենց պարտքերն : Ինչպէս կարելի է դրամ ուզել ժողովուրդէն երբ ամեն անգամ երեսնուս կը զարնեն թէ թող նախ Երեսփոխանք իրենց տուրքերն վճարեն : Հաւատացէ՛ք որ այսպէս Պատրիարքարանի վարկն ա՞յն աստիճան կոտրած և հասցեալ ա՞յնչափ նուազած են որ մինչեւ իսկ շրջանակներու մէջ խօսակցութեան նիւթ եղած է . . . :

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ցանցանքը անոնցն է որք Պատրիարքարանի վարկը կը կոտրեն հրապարակային խծծանօք և կասկած կը ներշնչեն ժողովուրդին :

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — (Շարունակելով) Երբ ոևէ անձ որ ազգային պաշտօնի կը կոչուի և չ'է կարող կամ չ'ուզէր, ըստ Սահմանադրութեան, իւր 75, 50 և կամ 25 ղրշի. տուրքն վճարել, Ազգն ի՞նչ օգուտ կը ունենայ ասասել և յուսալ այդպիսի անձէ մը : Զեզի կը հարցնեմ Երեսփոխան էֆէնտիներ, միթէ չըսէ՞ր ժողովուրդը թէ երբ մարդ մը չ'կրնար 25 ղրշ. տարեկան տուրք վճարել, այդ մարդն ի՞նչ ճիւներ չ'բերեր ազգին ղըլխուն երբ ազգային դրամական և փափուք գործեր կ'անցնին իւր ձեռքն : Նաեւ Ազգն ի՞նչ կրնայ յուսալ այն անձէն որ կարող լինելով հանդերձ կը զլանայ առ ազգն ունեցած իւր պարտուց մէջ : Ուրեմն այդպիսի անտարբեր և անկարող անձանց պաշտօն յանձնել, նա մանաւանդ տիրոջ երեսփոխանական ժողովոյ մէջ՝ ըստ իս անխիղճութիւն է պարզապէս : Իսկ երեսփոխանաց ոմանց այն առարկութիւնն թէ՝ մենք թէեւ մեր տուրքերն չ'ենք վճարեր, բայց չ'ենք զլանար մեր բարոյական աջակցութիւն, անիրաւ է և կը բղսբեմ այդ տարակութեանց դէմ, վասն զի մեր ժամերն սուղ են և մենք կ'աշխատիմք թէ նիւթապէս և թէ բարոյապէս :

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Կեցցէ՛ս :

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Ուստի իրաց այս վիճակն աչաց առջև ունենալով, միացանք մեր ընկերներուն հետ, չա՛տ մտածեցինք, չա՛տ խորհեցանք, և վերջապէս տեսնելով որ Պատրիարքարանի մուտքն ու ելքն իւր հաւասարութիւնն չ'զտներ, պարտաւորուեցանք 'ի պաշտօնէ նամակ գրել Քաղաք. ժողովոյն, յայտնելով իրաց տխուր վիճակն և մանաւանդ չը վարանեցանք յայտարարել թէ՝ եթէ Պատրիարքարանի այս անհաստատ վիճակն չարունակուի, օր մը նա ալ ահագին պարտքի մը տակ պիտի մնայ եւ ազգին սրտին վրայ վէրք մը պիտի ըլլայ, ինչպէս եղած է Երուսաղէմայ վանքն։ Շնորհակալ ենք որ Վարչութիւնն աղուշադրութիւն դարձնելով մեր այս ըսածներուն, իւր մէջն ելմտական Յանձնաժողով մը ընտրեց, որոյ հետ համախորհուրդ՝ պատրաստեցինք այս ելմտացոյցն դրական կերպիւ, և ջանացինք ըստ կարելւոյն զեղջել անոր մէջէն 3—400 ոսկւոյ գումար մը, որպէս զի ունեցած մուտքերնիս ծախուցն հաւասարի եւ սընտուկն պարտուց չ'ենթարկուի։

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊՍ. — (ընդմիջելով) Այո՛, այո՛ ճշմարիտ է։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Տեսանք եւ կը խոստովանիմք թէ՝ Պատրիարքարանի մէջ քիչ շատ թերութիւններ գործուեր են եւ կարելի եղած խնայողութիւնն զանձ առնուեր է։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ուրեմն Տնտեսական Խորհրդն ալ կը խոստովանի թէ՝ Պատրիարքարանի մէջ շռայլութիւնք եղեր են, աւելորդ պաշտօնեայներ պահուելով։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Ես անկեղծաբար կը խօսիմ։ Այո՛, Փափազեան էֆէնտի այս մասին քիչ մը իրաւունք ունի, բայց ո՛չ ամէն խնդրոց մէջ։

(Ընդհանուր ծիծաղ)

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Զոր օրինակ, Փափազեան էֆէնտի մեծապէս կը մեղանչէ, երբ կըսէ թէ շատ մը պաշտօնեայք կողմնակցութեամբ գործ գտած են Պատրիարքարանին մէջ։ Դեռ անցեալ օր երբ Քաղ. ժողովոյ երկու Ատենապետներն մէկ մէկ պաշտօնէից ամսականաց յաւելման մասին առաջարկութիւն կ'ընէին, յայտնեցի թէ՝ Պատրիարքարանն անկարող է այդ յաւելումն ընելու, եթէ կուզէք զանոնք Ձեր գրասենեակներն տարէք եւ գործածեցէք։ Եւ պէտք է գիտնալ թէ Վարչութիւնն այսպիսի առաջարկ մը ընելով, բընաւ մեղադրելի չէ, զի իւր դիրքն այնպէս ընել կը պահանջէր եւ մերն կը պահանջէր այս տեսակ պատասխան մը տալ։

ՁԱՅՆԵՐ. — Ապրի՛ք, շատ լաւ՞ խօսէր էք։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Այո՛, չ'գիտնաք որ չ'եմ ըսած, միշտ խօսեր եւ պօռայեր եմ։ Ահա ասոր համար էր որ կ'ըսէի թէ՝ Փափազեան էֆէնտիի ըրածն պարզապէս զըրպարտութիւն մ'է եւ կը մեղանչէ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ խօսքս հինեւրուն համար էր, եւ շնորհակալ ենք Ձեզմէ որ կը մաքրիք Պատրիարքարանն եւ կը բարեկարգէք զայն։

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Առ Փափազեան էֆ.) Դուք Քաղաքական ժողովոյ անդամ եղած ատենիդ ինչո՞ւ ձեր նախորդներէն եւ յաջորդներէն պահանջած բարեկարգութիւններնիդ չը կատարեցիք. ինչո՞ւ կեդր. Վարժարան չ'բացիք։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Զը թողուցին։

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Խրիմեա՞նը չը թողուց

միթէ նա՞ ալ թշնամի է գաւառական դաստիարակութեան։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է.Ֆ. — Այո՛։

ՉԵՐԱԶ Մ. Է.Ֆ. — Մեր քսելը ձեզի սովորութիւն բրած է՛ք, գիտենք։

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ. — Կաղաչեմ որ Ձեր այդ մասնաւոր բանակռիւները վերջի թողլով, թոյլ տաք Ատենապան էֆէնտիի շարունակել իւր խօսքն։

Շարունակեցէ՛ք Կամսարական էֆէնտի։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. Է.Ֆ. — (Շարունակելով) Կըսէի թէ կարելի եղած զեղջերն ու խնայողութիւնք ընելով համաձայնութեամբ Քաղ. Ժողովոյն հետ, Եվմացոյցն պատրաստելին և բերինք Պատկառելի Ժողովոյդ ընդունելութեան։ Բայց տեսանք թէ՝ մէկն մէկ կողմէն, միւսն միւս կողմէ սկսան զմեզ վշտացընել ու հարուածել։ Զոր օրինակ, Արեւելք լրագրին քննադատական յօդուածի մը մէջ կ'ելնէ կ'ըսէ թէ՝ «Ի՞թէ տնտեսագիտութիւն է 3–400 ռուբլոյ զեղջ մ'ընել Պատրիարքարանի պիւտճէէն և պաշտօնեայ ճամբել. հարկ է հաստատեալ աղբիւրներ գտնել և միւս կողմանէ Համարակալութեան Նախորդ Դիւանի Ատենապետ իւր տեղեկագրովն կուգայ զմեզ հարուածել ըսելով թէ՝ «որչա՞փ դժուարին բան խօսք հասկցնել Տնտես. Խորհրդականոյ» և թէ՝ «որչա՞փ զգայուն սիրտ ունենալու են անոնք և այլն»։ Ես ալ կըսեմ թէ՝ որչա՞փ զգայուն սիրտ ունենալու է Նախորդ Համարակալութեան Դիւանի Ատենապետ Աւիքանեան Մատթէոս էֆէնտին որ ց'արդ իւր ազգային տուրքերէն դրամ մ'իսկ չ'է վճարած։

(Զանազան նստարաններէ ծիծաղներ)

ՉԵՐԱԶ Մ. Է.Ֆ. — Հարցուցէք Ալիքսանեան էֆէնտիի թէ ինքն Քաղ. Ժողովոյ անդամ եղած ատեն ի՞նչու վարժապետանոցով չ'դրաղեցաւ փոխանակ Քիլիճի Վարդանով զբաղելու։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. Է.Ֆ. — (Շարունակելով) Իրրեւ թէ՝ մենք դաստիարակութեան պէտքն զգացած չ'լինէինք։ Որ՞ պապանձելի բերանն է այն որ ուրանայ կրթութեան կարեւորութիւն։ Թո՛ղ ըսէ Պէրպէրեան էֆէնտին, որ ատ ներկայ է, միթէ ես իմ զբաղակցս կրթութեան խնամք չ'է՞մ տարած և այնքան ծախքեր բրած, և ովէ՞ այն հայը որ նախանձախնդիր չ'ըլլայ իւր ազգին մանկտւոյն կրթութեան։ Միթէ կը կարծէք թէ Ազգային Վարչութիւնն դաստիարակութեան թշնամի ըլլալուն համար է՞ որ գումար մը չ'է սահմանած Եվմացոյցի մէջ յ'անուն այդ կենսական պիտոյից։ Ո՛չ Երեսփոխան էֆէնտիներ, ո՛չ. սխալ հասկացողութիւն մը կայ, պէտք է գիտնալ թէ՝ Եվմացոյցի մէջ տեսնուած «դժուարագանձելի» բառն սխալմամբ դաստիարակութեան գլխոյն միայն նշանակեալ է, վասն զի Պատրիարքարանի բոլոր հասոյթներն ալ դժուարագանձելի են...։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է.Ֆ. ԵՒ ՄԻ ՔԱՆԻ Ե. ՐԵՍՓՈԽԱՆԵՔ — (Ընդմիջելով) Քանի որ Տընտեսական Խորհրդոյ Ատենապետ էֆէնտի եւ կառնու «դժուարագանձելի» բառն, խնդիրն ինքնին կը լուծուի։

Զանազան նստարաններէ զոռոնակութեան ցոյցեր.

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. Է.Ֆ. — Այո՛, կը յայտարարեմ թէ՝ բոլոր նշանակեալ հասոյթներն ալ դժուարագանձելի են, վասն զի Պատրիարքարանի վարին ա՛ն ատոհման կտրած է որ 450 ղրշ. նպարեղէն առնելու համար պարտ-

ուսորուեր է երեք Նպարավաճառաց եւս դիմել և պարոք ընել։ Ուստի ամենէն ա՛ռաջ պէտք է Պատրիարքարանի պատիւն բարձրացնելու աշխատիլ։

Անցեալ օր Փափազեան էֆէնտի կըսէր թէ՝ նորեկ Երեսփոխանք անցեալէն տեղեկութիւն չունին և պէտք է գան ու մեր փորձառութենէն օգուտ քաղեն։ (Ա. Փափազեան էֆ.) Զեմ ըսեր թէ՝ փորձառու չ'էք. բայց կը խոստովանիմ նաեւ որ Ձեր այդ փորձառութեամբն չատ անգամ ալ Ազգն փորձանքի հանդիպացուցած էք։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քա՛ւ խելքովդ։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Կըսէի թէ պէտք է նախ աշխատիլ Պատրիարքարանի վարկն բարձրացնելու, բայց այդ վարկն չը բարձրանար երբ ազգային լրագրաց մէջ սըխալ լուրեր կը հրատարակուին անոր նկատմամբ։

Զոր օրինակ, անցեալներն Հայրենիք լրագիրն, իբրեւ ազգային թարմ լուր հրատարակած էր թէ՝ Քաղ. ժողովն նոր պաշտօնեաներ առնելու և եղածներուն ամսականաց վրայ յաւելումներ ընելու համար խորհրդակցութեան մէջ է Տնտես. Խորհրդոյ հետ։ Որչափ հեռի է այս լուրն ճշմարտութենէ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մի՞թէ չեղա՞ւ Ձեզ այդպիսի առաջարկ մը։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Ահա եղելութիւնն Երեսփոխան էֆէնտիներ։ Պաշտօնեայ մը կը հրաժարի և Քաղ. ժողովն կառաջարկէ որ այդ հրաժարեալ պաշտօնէին թողած ամսականն բաշխուի մի քանի պաշտօնէից ամսականացը վրայ. բայց մենք չ'կրցանք ընդունիլ այս առաջարկն յայտնելով Պատրիարքարանի անտուկի անձուկ վիճակն։ Ահա այս է եղելութիւնն զոր Հայրենիք կը փութայ հրատարակել տարբեր ձեւերով և . . .

(Մելիքեան էֆ. կուզէ ընդմիջել ատենապետը)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կամաարական էֆէնտի, լրագրաց մէջ եղած հրատարակութեանց այս բանն պատասխանել ներելի չ'է բնաւ, պաշտօնական մարմնոյ։

Տնտեսական Խորհուրդն ազատ է 'ի պաշտօնէ հերքել Հայրենիքի այդ տուած սխալ տեղեկութիւնն։ Ուստի հանձնէք մի միայն Երեսփոխանական ժողովոյ մէջ եղած գիտողութեանց պատասխանել։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Ըսել կուզէի, Ատենապետ էֆէնտի, թէ այս տեսակ սխալ տեղեկութիւններով է ահա որ կը պղտորեն ժողովրդին միտը և պատճառ կըլլան որ Պատրիարքարանն 'ի զուր տեղը բանբասուի։

ՁԵՐԱՋ Մ. ԷՖ. — Եթէ ճշմարիտը խօսին, չ'են կարող Պատրիարքներ տապալել։ Սուտեր պէտք են որ ժողովուրդը զրդռուի։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Այդ տեսակ սխալ տեղեկութիւններ չատ անգամ պաշտօնական մարմնոյ կողմէ ալ կուգան, եւ այս էամենէն ցաւալին։ Զոր օրինակ, Խորէն Սրբազան կ'ելնէ այս ժողովոյս մէջ յայտարարելով թէ՝ Պատրիարքարանի պաշտօնեայք 1500 էն 2000 դրչ. ամսական կ'առնուն, մինչ Կրօն. ժողովոյ Դիւանադպիրն 800 դուրուշ։ Երբէք եղած չ'է որ աշխարհական պաշտօնեայ մը այդ տեսակ գումարներ ստանայ. ամենէն չատը 1300 դրչ. է։ Որչա՜փ սխալ, որչափ սխա՜լ։ Մանաւանդ իր այն խօսքն թէ՝ «կան պաշտօնեայներ որք սնտուկին պարտք ունին»։

Այս օրինակ յայտարարութիւն մը, բընաւ ներելի չ'է, մանաւանդ երբ Կրօն. ժողովոյ Ատենապետ Սրբազանի կողմէ կըլլայ. ցաւալի է կրսեմ, որ երբ երեսփոխանք կելնեն հոս խօսիլ Իշմացոյցին վրայ, ինք Խորէն Սրբազան եւս այս վիճաբանութիւններն

օգուտ քաղլով կելլէ ինչն ալ խօսի՝ հիմնելով իւր վաստերն սխալ եւ անստոյգ իրողութեանց վրայ, մինչդեռ որ իրեն չպակսիր ոչ Աստուծոյ սեղան եւ ոչ բեմ։

Գալով դաստիարակութեան խնդրոյն, ժողովդ կուզէ Ցանձնաժողով կազմէ, կուզէ Մասնաժողով, բայց պէտք է դիտնալ թէ կեդր. անտուկն այսօր կարող չէ 30–40 եւ ոչ իսկ 10 ոսկի վճարել. զի ես գործին մէջն եմ եւ գիտեմ։ Ուրիշ բան է երբ Ազգ. ժողովդ կըսէ թէ՝ Պատրիարքարանի մէջ մնած բոլոր դրամներն միմիայն դաստիարակութեան յատկացուին, մենք պատրաստ ենք գործադրել, վասնզի այդ դրամներն մեր տուները չպիտի տանինք։

Տեսէ՛ք, ազգն Հիւանդանոցի ալ, դըպրոցի ալ, ընկերութեանց ալ միշտ դրամ կուտայ, բայց Պատրիարքարանն այդ տեսակ բարեպաշտական հաստատութիւն մը չէ որ կարենայ հանգանակութեամբ դրամ հաւաքել, անի պաշտօնատուն մ՚է . . . . :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մենք ալ Պատրիարքարանն դպրոցի վերածել կուզենք, որպէս զի ազգն դրամ տայ։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Ո՛չ, ո՛չ, այդպէս չէ Փափազեան էֆէնտի, այդ կերպով Պատրիարքարանն իւր վարկն եւ պատկառանքն կը կորուսանէ։ Հարկ է անհատապէս աշխատիլ եւ կազմել մի Մասնաժողով որ նախ Պատրիարքարանի անհրաժեշտ պէտքերն ճըշդէ եւ յաւելեալ գումարներն ժողովդը տըրամադրութեան տակ դնէ, նաեւ դաստիարակութեան, եւ կրօնական դիտութեան զարգացման փոյթ եւ խնամ տանի, եւ մանաւանդ կրօնական ճիւղին, վասն զի ցաւալի է տեսնել որ այսօր մեր կրօնքն խախտելու վրայ է, եւ որոյ հետեւանքն պիտի լինի ազգին անկումը։ Ես կ՚առաջարկեմ այդ Ցանձնաժողով կազմել և ՀՆՈՐ անդամ ընտրել Փափազեան, Մէլիքեան եւ այլ էֆէնտիք որպէս զի նախ իրենք իրենց մէջ համոզում գոյացնեն եւ եթէ կարելի է, գործադրեն։ Փափազեան էֆէնտի մինչ պաշտօնէից վրայ կը խօսի, բայց մի՛թէ անանկայեր է՞ Պատրիարքարանն։ Նախ պէտք է որ Պատրիարքարանի պարտքն տանք եւ ապա բարեկարգենք։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Շատ անդամներ պարտք եղած եւ տրուած է։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — (առ. Փափազեան էֆէնտի) Դո՞ւք ինչ տուած էք։ (շարունակելով) Այսօր մեր զաւակներն կրթութիւն կ՚ստանան, ամեն տեսակ լեզու կը սովրին, բայց երբ լոկ հայերէն գիտցող մի հայ ելնէ ճաշի սեղանին տակ խաչ հանէ, այդ գաղղիագէտ եւ անգլիագէտ երիտասարդներն որք Հայր մերն իսկ չեն գիտեր, քթերնուն տակէն կը ծիծաղին։ Ուրեմն պէտք է ամեն բանէ առաջ կրօնական զգացումը ամրապընդել այս ազգին մէջ։ Զեմ գիտեր թէ Իզմիրեան Գեր. Սրբազան Կրօնական զգայումը տարածելու համար մեր մէջ՝ ինչո՞ւ իւր ճարտասանական տաղանդն՝ ի գործ չ՚դներ եւ չէ. զոք գիրք մը բռնած է։

Ուստի վերստին կուզամ յայտարարել թէ՝ պէտք է այդ Ցանձնախմբին կազմութեան աշխատիլ որ հոգ տանի նաեւ կտակային եւայլն գործոց, զի այնքա՞ն ինդիրներ ունինք որք երեսի վրայ մնացած են մանաւանդ կտակայինները որք նուիրական են։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՞նչ եղաւ Մնակեանի կտակին խնդիրը։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Ես հոտ չ՚եմ կրնար մանել։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՞նչ ըսել է. երբ Երեսփոխանաց ունեցած պարտուց վրայ կը խօսինք, կրնար նաեւ քիչ մ՚ալ այդ 3000 ոսկւոյ կտակին վրայ խօսիլ։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Այդ խնդիրն Վարչութեան ձեռքն է, եւ ես չեմ կրնար այդ տեսակ փափուկ խնդրոյ մը մէջ մտնել և լաւ կ'ըլլայ եթէ երեսփոխանք ալ առ այժմ չը մտնեն։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Միթէ այդ դուռմարն ալ Ազգային դրամ չէ՞ եւ քանի որ յանուն Վարչութեան կը խօսիք, կրնաք այդ մասին ալ հարկ եղած տեղեկութիւններն ալ տալ հոս։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Ես յանուն Վարչութեան չեմ խօսիր եւ կրնաք այդ մասին վերսին հարցում մ'ընել Վարչութեան։ (Շարունակելով) Եզրակացնելով ուրեմն, կը սեմ թէ պէտք է յիշատակած ցանձնախումբս կազմել եւ անհատապէս ոյժ տալ կրթութեան գործին եւ գտնել նորանոր հասոյթից աղբիւրներ։

Իսկ գալով Տնտես. Խորհրդոյս, նա միակ յոյս մ'ունի, այն է ապասել մարդահամարի գործողութեանց աւարտման, գիտնալու համար թէ՝ քանի՞ հոգի կայ ազգային տուրք վճարող, եւ մինչեւ որ այս գործողութիւնը չ'աւարտին, բան մը չ'պիտի կրնանք ընել եւ ժողովոյդ որոշումներն միմիայն թղթի վրայ պիտի մնան։ — Քանի՞ քանի՞ անգամներ պատիւ ունեցայ ներկայ գտնուիլ այս ժողովոյս եւ տեսայ թէ միմիայն եսութիւնն է որ կը թագաւորէ հոս։ Ուստի եթէ մէկ կողմ թողումք այս եսութիւնն եւ ձեռք ձեռքի տալով աշխատինք, հաւատացէք թէ՝ շատ օգտակար ձեռնարկներ կրնամք 'ի գլուխ հանել։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տնտեսական Խորհրդոյ Ատենապետ էֆէնտիի յայտարարութեան վրայ մանաւանդ թէ՝ խօսքից կարգն ապառած լինելով, վիճաբանութիւնք ինքնին դադրած պէտք է նկատել և ձեռնարկել քուէարկութեան։

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ես խօսք ուզած եմ, Ատենապետ էֆէնտի։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դուք արդէն, Զերաբ էֆէնտի, երկու անգամ խօսք առած էք, և օրէնքն չ'ներեր երրորդ անգամ մի և նոյն խնդրի վրայ խօսք տալ երեսփոխանի մը, առանց ժողովոյ կամաց դիմելու։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ Զերաբ էֆէնտիի խօսք տրուի, ես ալ խօսք կուզեմ յայնժամ։

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ես արձանագրուած եմ, և խօսք կուզեմ նախորդ նստէն 'ի վեր մեզ դէմ յարուցուած բոլոր առարկութիւններն հերքելու համար։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Ես ալ խօսք ուզած և անուն արձանագրել տուած եմ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դուք ալ, Ղազարոսեան էֆէնտի, երեք անգամ խօսք առած էք։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Սխալ է՛ ելմտացոյցի վրայ։ Ես մի անգամ միայն խօսք առած եմ, իսկ երկու անգամ ալ տարբեր խնդրոց վրայ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենագրութիւնք գրուած են, դիրքս կրնամ տեղեկանալ քանի անգամ խօսած ըլլալիդ։ Ուրեմն հարկ կըլլայ վիճաբանութեան փակումը կամ շարունակութիւնն քուէի դնել։

Զայս ասելով Ատենապետ էֆէնտի ժողովոյ կամացը կը դիմէ որ 5 'ի դէմ 47 քուէով Ելմտացոյցի վիճաբանութիւնն փակել։

(ՅԵՐԵՎԱՆԻՑ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեւոյթներն Տեարց ամենքն ալ խօսեցան խնդրոյն վրայ և բերին իրենց առաջարկութիւններն։

Ուրեմն կը մնայ Դիւանիս խնդրոյն վիճակը պարզել Ձեզ մի քանի խօսքով։

Յ՚անուն Տնտես. Խորհրդոյ, Կամարական Էֆէնտի խօսք առաւ որով խնդրոյն կը նշիրեն ինքնին լուծուեցաւ իւր այն յայտարարութեամբն թէ՝ դատարակութեան և Գաւառական այցելութեանց դէմ նշանակեալ դժուարագանձելի բառն սխալմամբ դրուէր է և թէ ամբողջ պիւտճէին մէջ եղած հասոյթք դժուարագանձելի են։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քանի՞՝ որ դժուարագանձելի բառն կը վերնայ, մենք եւս ամբողջ պիւտճէն կ՚ընդունինք նոյնութեամբ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն երեւոյթնք մեծաւ մասամբ կուգան կը յանգին մէկ կէտի մը, այն է ընդունիլ Տնտես. Խորհրդոյ կողմանէ ներկայացեալ 84-85 տարւոյ Ելմտացոյցը, Ջնջելով անոր մէջէն դժուարագանձելի բառն։

Բայց ըստ որում այս մասին նախապէս զանազան առաջարկութիւնք ներկայացուած են Դիւանիս, յ՚որս կը գտնուի նաեւ Կրօն. Ժողովոյ 500 ռուբլոյ վարկի առաջարկն, որ վիճաբանութեան միջոցին Կրօնական ժողովոյ Ատենապետն ներկայացուց, ուստի այս մասին երեւոյթնք կանխապէս համաձայնութիւն մը գոյացնելու համար, կարեւոր կը նկատեմ տասն վայրկեան դադարի համար վակել Ազատանն։

ՁԱՅՆԵՐ — Լաւ կ՚ըլլայ։

(Տասն վայրկեանի դադարէն յետոյ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այլ և այլ առաջարկներ ներկայացնող երեւոյթները, նոյն իսկ Կրօն. Ժողովն, համաձայնելով Կամարական Էֆէնտիյայտարարութեան, հեռուեալ բանաձեւն պատրաստած և ներկայացած են Դիւանիս որ պիտի ընթեռնու Ձեզ Պէրպէրեան Էֆէնտի։

«Ազգային Ժողովը կ՚ընդունի Վարչութեան կողմէ ներկայացեալ 1884-85 տարւոյ Ելմտացոյցն, Ջնջելով 90.000 ղրշ. ի գումարի մը համար նշանակեալ «Դժուարագանձելի» հանգամանքն ու այս գումարէն մնացեալ 8 ամսոց համար 22,500 ղրշ. Կրօն. Ժողովոյ, և 22,500 ղրշ. Ուսումն. Խորհրդոյ տրամադրութեան ներքև դնելով։

Ազգային Ժողովը կը կարդէ նաև Ճանձնախումբ մ՚որոյ պաշտօնը պիտի լինի պատրաստել յառաջիկայ Սահմանադրական տարւոյ համար Ելմտացոյց մը, խորհրդակցելով Վարչութեան հետ և Ազգային Կրթական ու Կրօնական պիտոյից գոհացում տալու համար յարմար գումարները սահմանելով քննել Տրոց Կանոնադրին անդրադարձութեան պատճառներն և Ազգային Կեդրոնական անտուկի ուղղակի և անուղղակի հասոյթները աճեցնելու միջոցներ գտնել և տեղեկագրել»։

(ՅԵՐԵՎԱՆԻՑ)

ՅԱՄԵՆՈՒՍ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ — Շատ լաւ, շատ լաւ է։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ալ որ կ՚ընդունի այն բանաձեւն իւր ամբողջութեամբ, թող հոնի յայտնել իւր համամտութիւնն։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Խնդրեմ մի անգամ եւս կարդալ այդ բանաձեւն, վասն զի ինչպէս գիտէք, խնդիրն զրամական է։

(Գիրպէրեան Էֆ. վերստին կընթերցուի զայն)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք Կամսարական էֆէնտի։ Համաձայն է՞ք։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Այդ յիշատակեալ գումարներն ե՞րբ պիտի վճարուին։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներկայ շրջանիս մէջ։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Հարկ է նախ Վարչութեան կարգիքն առնուլ, զի եթէ կեդրոնական կարենայ նէ պիտի վճարէ։ Պէտք չ'է ինքզինքնիս խաբենք։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դուք կիր յայտարարողն Կամսարական էֆէնտի, թէ ամեն գումարներն ալ դժուարագանձելի են։ Հետեւարար, ինչպէս օրէն է, Վարչութեան կը պատկանի պիւտճէին մէջ նշանակեալ զանազան գլխոց ստորոգագանութեան ստորճանն իմաստասիրել, և գտնել։ Ուստի ինչ չափով որ ըստ կարգի խրեանց կարեւորութեանց միւս պիտոյից գտնուում պիտի տրուի, նոյն համեմատութեամբ եւս անոնց կը տրուի։ Եւ բնական է որ երբ անտուն ղրամ չ'ըլլայ, չը կրնար և ոչ ոք գտնել։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՖ. — Այդէն Սնտուկը թէ կրօնական ժողովոյ և թէ Ռուսական խորհրդոյ Դիւանաց համար հարկ եղած վճարումներն կ'ընէ։

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Իրրեւ ելեւմտական չ'եմ կրնար ընդունիլ Ատենապետ էֆի. տուած բացատրութեան վերջի մասն, ընդունելով հանդերձ եկած առաջարկն։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն Երեւմտեան Տեսչք, այն բանաձեւն Ձեր քուէին կ'ենթարկեմ հրատարելով զայն ընդունողներ յանոնկոյս յայտնել իրենց համամտութիւնն։

Հետեւարար յանոնկոյս բուէարկութեամբ ժողովն 27 քուէով ԿԸՆԴՈՒՆԻ ներկայացեալ բանաձեւն անփոփոխ կերպիւ։

(Այն քուէարկութեան մէջ ձեռնպահ կը մնայ Մինաս Ձերամ էֆէնտի, յայտարարելով թէ՝ ինքն չ'հաւատար որ այդ քուէարկեալ բանաձեւն կարելի լինի գործադրել։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդ պէտք է նկատողութեան առնուլ նաեւ թէ, ժողովդ այն բանաձեւն քուէարկելով, որոշած կը լլլայ նաեւ, Համարակալութեան նախորդ Դիւանի այն տեղեկագիրն, որ 'ի սկզբան զատած էր։ Կարծեմ թէ յիշեալ տեղեկագիրն կաղմուելիք Մանաժողովին յղելով նոյն խնդիրն Օրակարգէն կրնամք ջնջել։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այո՛, ճիշդ է։

ՈՒՐԻՇ ՄԻ ՓԱՆԻ ՆՈՏԱՐԱՆՆԵՐԷ — Այնպէս է։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ժողովս միաձայնութեամբ կարող է, ջնջել յիշեալ տեղեկագիրն օրակարգէն յղելով զայն կաղմելի Ցանձնաժողովին, որպէս ընտրութիւն, ժողովոյ փակման ժամն անցած ըլլալով, յաջորդ նստին Օրակարգի Ա. խնդիրն կըլլայ։

Գ. Բացակայք

Ատենապետ էֆէնտի ժողովին կը ներկայէ սոյն նիստէն երրորդ բացակայութիւն ունեցող Երեւմխոխանաց ցանկն, և կը յարէ թէ յառաջիկայ նստին համար յատուկ կոչնագիր պիտի յղուի անոնց, ըստ օրինի։

Մատթէոս	էֆէնտի	Ալիքսանեան
Կարապետ	»	Իւթիւճեան
Կարապետ	»	Հաղարեան
Ղազար	»	Հովուեան
Գէորգ	»	Ապտուլլահեան
Բարթող	»	Քիւրքճիպաշեան
Մինրան	»	Ինճէկեան

Դ. Բացակայք

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս անգամ չորրորդ և ութերորդ բացակայութիւն ունեցող Երեւմխոխանք են՝

Յովակիմ	էֆէնտի	Անարէսեան (Դ)
Գարեգին	»	Պաղտատեան (Բ)

որոց ստորագրեալ տուացագիրն ունիմք 'ի ձեռին, և որք հետեւարար հրաժարեալ կը համարուին ԸՍՏ օրինի յ'երեւմխոխանութենէ։

Ատենոր կը վերնայ ժամ 5 1/2 ին յաջորդ Նիստն 15 օրէն գումարելու որոշմամբ։

Ատենադպիր Ատենապետ

Տ. ԱՐՇԱԿՈՒՆԻ Տ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

ՆԻՍՏ Ը.

3 ՕԳՈՍՏՈՍ 1884

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵՊԻՍԿՈՊԱԿԱՆՔ

Ա. Վիճակ

Սիմէոն Եպս. Սէֆէրեան Բ
Կարապետ Վ. Բազրատունի
Վահան Վրդ. Տ. Մինասեան Բ
Կարապետ Քահ. Սէթեան Բ 2

Բ. Վիճակ

Խորէն Արքեպ. Նար-Պէյ Բ 2
Մատթէոս Եպս. Իզմիրլեան
Յովհաննէս Քահ. Մկրեան Բ
Գրիգոր » Ամէմեան Բ

Գ. Վիճակ

Յակոբ Վ. Ա. Փափազեան Բ
Խորէն Քահ. Փէհլիվանեան Բ 2
Ոսկի Քահ. Օհանեան

Դ. Վիճակ

Եղիշէ » Այվազեան Բ 2
Յովհաննէս Վ. Սրշարունի
Սահակ Քահ. Տ. Սարգսեան Բ
3

Ե. Վիճակ

7 Յովսէփ Վարդ. Այվազեան
8 Գարեգին » Թաթարեան Բ
9 Սուքիաս Քահ. Ստեփանեան Բ
20 Գաբրիէլ » Խանմեան

---

1 Բացակայութիւն առաջին։
2 » երկրորդ։
3 » բանաւոր պատճառաւ։

ՊՈՒՐՍԱՅԵՑՈՒՆՔ

Ա. Վիճակ

Գում-Գաբու, կետիկ-փաշա. եւ Գում-Գաբուի դուրս

21 Գրիգոր Պէրպէրեան Բ 2
22 Կարապետ Աղարդմաճեան Բ 2
23 Բարթող Քիւրքճիպաշեան Բ 3
24 Գէորգ Ապտուլլահեան Բ 3
25 Ե. Մէրեէմ-Գուլի Բ Պ
26 Տիգրան Հիւնքեարպէյենտ. Բ Պ
27 Աւետիս Սուրէնեան Բ
28 Տօքթ. Այվազեան Բ
29 Գէորգ Այվազեան Բ Պ
30 Յակոբ Եէմէնիճեան
31 Յակոբ Գուրգէն Բ Պ
32 Թաչիկ Կամարական
33 Մինրան Ինճէեան Բ 8
34 Մարտիրոս Էքսէրճեան
35 Մանուէլ Պէշիրեան
36
37

Բ. Վիճակ

Գեղիկբաշ

38 Բարսեղ Հալաճեան Բ
39 Յովհաննէս Քէրէստէճեան Բ
40 Մելքոն Պարոնիկեան Բ 2

Եէնի-Գաբու

41 Լեւոն Քարամաճեան Բ Պ
42 Մարուքէ Ֆրէնկեան Բ
43 Պօղոս Էնքսէրճեան Բ
44 Յակոբ Պօշնակեան

Իւսկիւտար Ս. Խաչ

45 Սիմէոն Ֆէլէկեան
46 Գաբրիէլ Նորատունկեան Բ 2
47 Գասպար Գասպարեան Բ 2
48

Իւսկիւտար Ս. Կարապետ

49 Միհրան Պահճէդափուլ.
50 Պօղոս Թորգոմեան
51 Տրդատ Փափազեան Բ 2
52 Յակոբ Հաճեան Բ

Գ. Վիճակ

Գասըմ-Բաշա

53 Գասպար Ձերազ Բ 2

Բերա

54 Գրիգոր Ոչիմիյէճեան Բ
55 Ղազար Հովուեան Բ 3
56 Յարութիւն Պէկեան
57 Նշան Պօյաճեան
58 Վիչէն Օրմանեան
59 Սինեքերիմ Մանուկեան Բ Պ
60 Համբարձում Մազպուլեան Բ
61 Մանուկ Ալանեան
62

Միջագիւղ

63 Տիգրան Եուսուֆեան
64 Մկրտիչ Գազանճեան Բ
65 Մկրտիչ Ճանըմեան Բ
66
67

Պէյգօզ եւ Ղալաթիա

68 Միքայէլ Մասիկոնեան Բ 2

Դ. Վիճակ

Քուզկունճուգ եւ Իմատիէ

69 Մկրտիչ Մէզպուրեան Բ 2
70 Սիմոն Մաքսուտեան Բ 2

Գատըզիւղ

71 Գառնիկ Յովակիմեան Բ Պ
72 Կարապետ Հազարեան Բ 4

Նարլը-Գաբուռ

73 Միհրան Տէօքմէճեան

Եէնի-Մահալլէ Սամաթիոյ

74

Թօփ-Գափուռ

75

Էյուպ Ս. Եղիա եւ Ս. Աստուածածին

76

Գուրու-Չէշմէ

77 Կարապետ Սըլմաճեան Բ Պ

Հիսար եւ Պոյանի-Գիւղ

78

Նոր-Գիւղ եւ Սքենիա

79

Պալատ

80 Մկրտիչ Կիւմիւշեան
81 Ռէթէոս Թագէոսեան
82 Ներսէս Երէցեան Բ 2

Քարակեօմրիւկ

83 Յովհաննէս Թորոսեան Բ
84 Կարապետ Փանոսեան Բ 2

Ե. Վիճակ

Սամաթիա

85 Յակոբ Արշակ Բ 2
86 Սարգիս Աղաբէգեան Բ Պ
87 Յովհաննէս Նուրեան Բ
88 Ռուբէն Կիւմիւշկիրտան Բ 2
89
90
91
92
93
94

Խասգիւղ

95 Յովհաննէս Արշակունի
96 Ռուբէն Պուլկուրեան Բ 2
97 Յակոբ Խանտանեան Բ Պ
98 Նիկողոս Թիւլպէնճեան Բ Պ
99
100

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

Կարին

101 Սերովբէ Աղնաւորեան Բ 2

Քէօթանէա

102 Աւետիս Թընկրեան

Ադրիանուպօլիս

103 Յակոբ Պարոնեան Բ Պ

Նիկոմիդիա

104 Կարապետ Ս. Իւթիւճեան Բ 3

Ակն

105 Յակոբ Գորեան

Ղարահիսար

106 Կարապետ Երէցեան

Արաբկիր

107 Կարապետ Խաչիկեան

Բաղէշ

108 Արփիար Արփիարեան

Պրուսա

109 Քրիստոստուր Ղազարոսեան

Եդեսիա

110 Կարապետ Կիւրճեան Բ Պ

Ամասիա

111 Համբարձում Ագաճանեան Բ

Բալու

112 Յովհաննէս Աղնաւորեան Բ Պ

Եղեսիա

113 Յակոբ Իւթիւճեան

Մանճըլըխ

114

Հանճըն

115

Երզնկա

116 Ռեթէոս Պէրպէրեան

Թէքիրտաղ

117 Տիգրան Գ. Սինանեան Բ

Կեսարիա

118

Խարբերդ

119

Պայբուրտ

20 Ստեփան Գօլոլեան Բ

Մուշ

121 Ստեփան Փափազեան

Տիվրիկ

122 Նշան Գարագաշ

Զէյթուն եւ Մարաշ

123

Տրապիզօն

124

Պաղտատ

125 Կարապետ Սէթեան Բ 2

Տիգրանակերտ

126 Միհրան Զօպանեան Բ

Վան

127 Մարկոս Աղաբէգեանց

Աղթամար

128

Հալէպ եւ Այնթապ

129

Սեբաստիա

130 Մկրտիչ Ց. Մելիքեան

Ռուսճուգ

131

Բաբերդ

132

Զմշկածագ

133

Գաղատիա

134

Ատանա

135 Մինաս Զերազ

Սղերդ

136 Մատթէոս Ալէքսանեան Բ 3

Եօզղատ

137

Մալաթիա

138 Գէորգ Վարդանեան

Իզմիր

139

Եգիպտոս

140 Աբրահամ Մուրատեան

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԴԱՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Ադենադէր
2.	»	Սիմէոն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Իզմիրլեան	
4.	»	Գարեգին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Ադենադէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փափազեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	Քհյ.	Մկրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուքիաս	»	Յոհեփանեան	
12.	»	Գրիգոր	»	Ահէմեան	
13.	»	Խորէն	»	Փէհլիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

ԱՆԴԱՄՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Աղնաւորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այվազեան	Տօք. Նշան	»	Բ. Ադենադէր
3.	Գրլրճճրեան	Գէորգ	»	
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Ադենադէր
5.	Խրարրեան	Գրիգոր	»	
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	
7.	Հաղարեան	Կարապետ	»	
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ. Ադենադէր
9.	Մաքսուտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	
11.	Պապօեան	Պապի	»	
12.	Սթիմարճեան	Գէորգ	»	
13.	Փէշտիմալճեան	Տօքթօր Տիգրան	»	
14.	Քիւրքճիխանլեան	Կարապետ	»	

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՕՐԱԿԱՐԳ

Ա. — Ատենական գործողութիւնք.
1. — Վաւերացումն Է. Նստի Ատենագրութեան.
2. — Բացակայութիւնք.
3. — Հրաժարագիրք յԵրեսփոխանութենէ.
4. — Տեղեկագիր երեսփոխական ընտրութեան Միջադիպի.
5. — Միջադէպ.

Գ. — Շարունակութիւն վիճաբանութեան 'ի վերայ Ազգային կեդրոն. Եմբ-տացոյցի.

Գ. — Բացակայք.

Դ. —